ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 07.02.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ

ԹԻՎ ՍՑ-ԷՍ-2019/09

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 15.01.2019թ. թիվ 26-3/370-19 գրությամբ «ՄԵԴՊՐՈ» ՍՊԸ-ին /ՀՎՀՀ 02626144/ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ առողջապահության նախարարության (այսուհետ՝ նաև Պատվիրատու) 09.01.2019թ. թիվ ՀՀ/06.3/24-19 գրության հիման վրա, 15.01.2019թ. նախաձեռնել է «ՄԵԴՊՐՈ» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ նաև Ցուցակ) ներառելու ընթացակարգ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

2. <u>ՀՀ առողջապահության նախարարության ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ առողջապահության նախարարությունը 09.01.2019թ. թիվ ՀՀ/06.3/24-19 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«Առողջապահության նախարարության կարիքների համար անհրաժեշտ բժշկական նշանակության ապրանքներ ձեռքբերելու նպատակով, իրականացվել է «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2018/41» ծածկագրով գնման ընթացակարգ: Գնման ընթացակարգի գնահատման և ամփոփման արդյունքում «ՄԵԴՊՐՈ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը գնահատվել է անբավարար և մերժվել՝ հրավերով սահմանված տեխնիկական բնութագրերին չհամապատասխանելու հիմքով»:

Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերին մասնակցում էր Պատվիրատուի լիազորված ներկայացուցիչ Միհրան Համբարձումյանը:

3. <u>«ՄԵԴՊՐՈ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

«ՄԵԴՊՐՈ» ՍՊԸ-ն 30.01.2019թ. Բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալ դիրքորոշումը.

«Գործի հակիրճ նկարագրությունը.

«ՄԵԴՊՐՈ» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) մասնակցել է ՀՀ առողջապահության նախարարության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կարիքների համար կազմակերպված «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2018/41» ծածկագրով էլեկտրոնային աճուրդին (այսուհետ նաև՝ Աճուրդ) և 1-ին, 14-րդ և 27-րդ չափաբաժինների մասով ճանաչվել առաջին տեղ զբաղեցնող մասնակից:

Աճուրդի գնահատող հանձնաժողովի 29.10.2018թ. տեղի ունեցած նիստի թիվ 6 արձանագրության 7-րդ կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովը առաջին տեղ զբաղեցրած մասնակիցներին առաջարկել է ծանուցել 3 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը և բնութագրերը:

Աճուրդի գնահատող հանձնաժողովի 28.11.2018թ. /մոտ 1 ամիս անց/ տեղի ունեցած նիստի թիվ 10 արձանագրության 3-րդ կետի համաձայն արձանագրել է՝ 1-ին չափաբաժնի մասով «ՄԵԴՊՐՈ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված տեխնիկական բնութագրում կան անհամապատասխանություններ հրավերով սահմանված տեխնիկական բնութագրին: Մասնավորպես, արձանագրվել է հետևյալը.

Հրավերով սահմանված տեխնիկական բնութագիր.

1. Արտածումների գրառումը՝ Ձեռքի կառավարմամբ և ավտոմատ:
2. Ավտոմատ գրառման տպման արագությունը՝ ոչ պակաս քան 25մմ/վ,50մմ/վ;
3. FVC ոչ պակաս քան ներկայացված – FEV1, PEF, /FEV1/FVC/, FEF25, FEF50, FEF75, FEF 2575, FEV6, FEV1/FEV6, ELA, FET;
4. SVC՝ ոչ պակաս քան ներկայացված – IC, ERV, IRV, IVC, TV;

Նույն պարամետրերի մասով «ՄԵԴՊՐՈ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված տեխնիկական բնութագիր.

1. Auto, Rhythm, Disclosure, Arrhythmia detect;
2. տպման արագությունը 5մմ/վ, 12.5մմ/վ, 25մմ/վ, 50մմ/վ, 100մմ/վ;
3. FVC, FEV1, PEF, /FEV1/FVC/, FEF25, FEF50, FEF75, FEF2575, FEV6, FET;
4. ERV, IRV, TV:

Նույն արձանագրության 3.2 կետով գնահատող հանձնաժողովը առաջարկել է «ՄԵԴՊՐՈ» ՍՊԸ-ին առաջարկել շտկել արձանագրված անհամապատասխանությունները մինչև սույն թվականի նոյեմբերի 30-ը ժամը 18:00-ն:

«ՄԵԴՊՐՈ» ՍՊԸ-ն գնահատող հանձնաժողովին ուղղված 03.11.2018թ. գրությամբ (կցվում է) հիմնավորել է, որ իր կողմից ներկայացված ապրաքի տեխնիկական բնութագիրը համապատասխանում է հրավերի պահանջներին:

Այնուհետև, Աճուրդի գնահատող հանձնաժողովի 27.12.2018թ. տեղի ունեցած նիստի թիվ 11 արձանագրության 1 կետի համաձայն՝ «ՄԵԴՊՐՈ» ՍՊԸ-ի կողմից շտկման արդյունքում ներկայացված գրությունը բավարար հիմք չէ վերջինիս կողմից ներկայացված տեխնիկական բնութագիրը հրավերի պահանջներին բավարար գնահատելու համար, ուստի հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 18-ի թիվ 534-Ն որոշմամբ

հաստատված կարգի 23-րդ կետը՝ որոշվեց «ՄԵԴՊՐՈ» ՍՊԸ-ի կողմից 1-ին չափաբաժնի համար ներկայացված հայտը գնահատել անբավարար:

Իրավական հիմքերը և հիմնավորումները.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատաս-խանությունը:

Ինչպես արդեն հայտնել ենք, «ՄԵԴՊՐՈ» ՍՊԸ-ն մասնակցել է ՀՀ առողջապահության նախարարության կարիքների համար կազմակերպված «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2018/41» ծածկագրով էլեկտրոնային աճուրդին և 1-ին, 14-րդ, 27-րդ չափաբաժինների մասով ճանաչվել առաջին տեղ զբաղեցնող մասնակից:

Աճուրդի գնահատող հանձնաժողովի 29.10.2018թ. տեղի ունեցած նիստի թիվ 6 արձանագրության 7 կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովը առաջին տեղ զբաղեցրած մասնակիցներին առաջարկել է ծանուցել 3 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը և բնութագրերը, իսկ 28.11.2018թ. տեղի ունեցած նիստի թիվ 10 արձանագրության 3 կետի համաձայն

արձանագրել է, որ 1-ին չափաբաժնի մասով «ՄԵԴՊՐՈ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված տեխնիկական բնութագրում կան անհամապատասխանություններ հրավերով սահմանված տեխնիկական բնութագրին:

Այնուհետև, գնահատող հանձնաժողովը առաջարկել է «ՄԵԴՊՐՈ» ՍՊԸ-ին շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

«ՄԵԴՊՐՈ» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում շտկել է անհամապատասխանությունները (ներկայացրել է համապատասխան հիմնավորում համապատասխանության վերաբերյալ), սակայն գնահատող հանձնաժողովը՝ 27.12.2018թ. տեղի ունեցած նիստի թիվ 11 արձանագրության 1-ին կետի համաձայն արձանագրել է, որ «ՄԵԴՊՐՈ» ՍՊԸ-ի կողմից /շտկման արդյունքում/ ներկայացված գրությունը բավարար հիմք չէ վերջինիս կողմից ներկայացված տեխնիկական բնութագիրը հրավերի պահանջներին բավարար գնահատելու համար, ուստի հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 18-ի թիվ 534-Ն որոշմամբ հաստատված կարգի 23-րդ կետը՝ որոշվեց «ՄԵԴՊՐՈ» ՍՊԸ-ի կողմից 1-ին չափաբաժնի համար ներկայացված հայտը գնահատել անբավարար:

Հայտնում ենք, որ «ՄԵԴՊՐՈ» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում շտկել է գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրված անհամապատասխանությունները՝ ներկայացնելով համապատասխան գրություն-վերլուծությունը, որը, կարծես թե, գնահատող հանձնաժողովի կողմից մասնագիտական ուսումնասիրության չի ենթարկվել, այլ ընդամենը վերացական արձանագրվել է, որ ներկայացված գրությունը բավարար հիմք չէ վերջինիս կողմից ներկայացված տեխնիկական բնութագիրը հրավերի պահանջներին բավարար գնահատելու համար:

Տեղեկացնում ենք, «ՄԵԴՊՐՈ» ՍՊԸ-ի կողմից «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2018/41» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի 1-ին չափաբաժնի մասով առաջարկվել է Bionet Gardio 7-s ԷՍԳ/սպիրոմետր սարքը, որը նախատեսված էր «Տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի կարիքների համար:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ պարբերության համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված

և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը:

Գնումների հետ կապված բողոքը քննող անձի ուշադրությունը հրավիրում ենք այն հանգամանքի վրա, որ «ՄԵԴՊՐՈ» ՍՊԸ-ի կողմից առաջարկված Bionet Gardio 7-s ԷՍԳ սարքը լիովին համապատասխանել է «Տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի կարիքներին, ինչը Ընկերությունը մինչև հայտ ներկայանելը պարզել է:

Ավելին, ի պատասխան Ընկերության հարցմանը՝ «Տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն Լ. Քոչարյանը իր 24.01.2019թ. թիվ 845 գրությամբ հայտնել է իր կարծիքը «ՄԵԴՊՐՈ» ՍՊԸ-ի կողմից առաջարկված Bionet Gardio 7-s ԷՍԳ/սպիրոմետր սարքի վերաբերյալ. «Տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ուսումնասիրվել է Ձեր կողմից առաջարկված մոդելի (Bionet Gardio 7-s) ԷՍԳ/սպիրոմետր սարքի տեխնիկական բնութագիրը, տեղեկացնում եմ, որ մոդելը բավարարում է «Տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի պահանջներին (գրության պատճեն կցվում է):

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ուշադրությունն ենք դարձնում նաև այն հանգամանքի վրա, որ «Մեդպրո» ՍՊԸ-ի կողմից առաջարկվող սարքավորումը համապատասխանում է ընթացակարգի հրավերի պահանջներին և համարժեք է այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվել է տվյալ գնումը:

Մասնավորապես, (Bionet Gardio 7-s) ԷՍԳ/սպիրոմետր սարքը ունի ավտոմատ և ձեռքի կառավարմամբ տպելու հնարավորություն, ավտոմատ գրառման տպման արագությունը, պահանջող 12.5նն/վ և 25մմ/վ փոխարեն կարելի է ընտրել 12.5մմ/վ, 25մմ/վ, 50մմ/վ:

Սպիրոմետրի FCV-ի շարքից «Մեդպրո» ՍՊԸ-ի կողմից առաջարկվող մոդելում բացակայում է միայն ELA և FEV1/FEV6 պարամետրերը, որոնք չափվող պարամետրներ չեն, այլ հաշվարկվող, այսինքն առաջարկվող սարքը առանձին չափում է FEV1 և FEV6 պարամետրեր, իսկ բացակայող FEV1/FEV6 պարամետրը ստանալու համար ուղղակի պետք է FEV1 արժեքը /որը առկա է/ բաժանել FEV6 /որը առկա է/ արժեքի վրա:

Նույն կերպ բացակայող ELA պարամետրը հաշվարկելու համար անհրաժեշտ է օգտագործել հետևյալ պարզ բանաձևը՝

ELA = FVC/որը չափվում է առաջարկվող սարքի օգնությամբ/ + 50.7 – (33.3 × FEV1 /որը չափվում է առաջարկվող սարքի օգնությամբ/):

SVC շարքից «Մեդպրո» ՍՊԸ-ի կողմից առաջարկվող մոդելում բացակայում է IC և IVC պարամետրները, որոնք նույնպես ոչ թե չափվող այլ հաշվարկվող պարամետրներ են, որոնք հաշվարկվում են պարզ բանաձևի միջոցով, օրինակ IC=TV /չափվում է առաջարկվող սարքի օգնությամբ /+IRV/չափվում է առաջարկվող սարքի օգնությամբ/:

IVC նույնպես հաշվարկվում է պարզագույն բանաձևի միջոցով IVC = IRV/չափվում է առաջարկվող սարքի օգնությամբ/ + TV/չափվում է առաջարկվող սարքի օգնությամբ/ + ERV/ չափվում է առաջարկվող սարքի օգնությամբ/, պետք է նշել նաև, որ IVC պարամետրը կլինիկական նշանակություն չունի:

Այսպիսով, «ՄԵԴՊՐՈ» ՍՊԸ-ի կողմից առաջարկվող սարքի միջոցով հնարավոր է ստանալ բոլոր այն պարամետրերը, որոնք պահանջում է Պատվիրատուն, և հենց այս հիմնավորմամբ է «Տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ը հայտնել, որ Ընկերության կողմից առաջարկված մոդելի (Bionet Gardio 7-s) ԷՍԳ/սպիրոմետր սարքը բավարարում է «Տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի պահանջներին:

Հարգելի պարոն Սարգսյան, խնդրում ենք «ՄԵԴՊՐՈ» ՍՊԸ-ի կողմից «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտման փաստը քննելիս՝ հաշվի առնել, որ «ՄԵԴՊՐՈ» ՍՊԸ-ն չի խախտել գնման գործընթացի շրջանակներում ստանձնած որևէ պարտավորության, շտկման պահանջ ստանալով՝ անմիջապես ներկայացրել է մասնագիտական հիմնավորում, որ իր կողմից առաջարկված ապրանքի տեխնիկական բնութագիրը համապատասխանում է հրավերի պահանջներին և համարժեք է այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվել է տվյալ գնումը:

Ելնելով վերոգրյալից՝ խնդրում եմ հաշվի առնել ներկայացված փաստերը և փաստական հանգամանքները, Ընկերության դրսևորած վարքագիծը, և «ՄԵԴՊՐՈ» ՍՊԸ-ին չվերագրել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված գնման գործընթացի շրջանակում ստանձնած որևէ

պարտավորության խախտում, և վերջինիսի չներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերին մասնակցում էին Ընկերության տնօրեն Արտավազդ Օհանյանը և լիազորված ներկայացուցիչներ Հասմիկ Ենգոյանը և Արթուր Պարանյանը:

4. <u>ՍՑ-ԷՍ-2019/09 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Բողոքներ քննող անձն ուսումնասիրել է Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 15.01.2019թ. թիվ 26-3/370-19 գրությունը և կից փաստաթղթերը, ՀՀ առողջապահության նախարարության 09.01.2019թ. թիվ ՀՀ/06.3/24-19 գրությունը, «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2018/41» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2018/41» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ նաև Հանձնաժողով) 27.10.2018թ. նիստի թիվ 5, 29.10.2018թ. նիստի թիվ 6, 12.11.2018թ. նիստի թիվ 7, 14.11.2018թ. նիստի թիվ 8, 23.11.2018թ. նիստի թիվ 9, 23.11.2018թ. նիստի թիվ 10 և 27.12.2019թ. նիստի թիվ 11 արձանագրությունները, «ՄԵԴՊՐՈ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը, «ՄԵԴՊՐՈ» ՍՊԸ-ի Բողոքներ քննող անձին 30.01.2019թ. հայտնած դիրքորոշումը.

ՀՀ առողջապահության նախարարության կարիքների համար բժշկական սարքավորումների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2018/41» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգ (այսուհետ նաև՝ Աճուրդ), որին ի թիվս այլ մասնակիցների մասնակցության հայտ է ներկայացրել «ՄԵԴՊՐՈ» ՍՊԸ-ն:

Աճուրդի հրավերի մաս կազմող պայմանագրի նախագծին կից ներկայացված թիվ 1 հավելվածով՝ Աճուրդի 1-ին չափաբաժնով նախատեսված տեխնիկական բնութագրով «Էլեկտրասրտագրիչ» ապրանքատեսակի մասով սահմանվել են հետևյալ հատկանիշները.

«ԷՍԳ/Սպիրոմետր Էլեկտրոսրտագիր, ոչ պակաս քան 12 ալիքի ԷԿԳ, որը բերում է 12 արտածում, Համակարգչին միանալու հնարավորություն (RS232 կամ USB), Ներկառուցված

մարտկոցի առկայություն LCD էկրան, ոչ պակաս քան 5դյույմ: Արտածումների գրառումը՝ Ձեռքի կառավարմամբ և ավտոմատ: Ավտոմատ գրառման տպման արագությունը՝ ոչ պակաս քան 25մմ/վ, 50մմ/վ Ձեռքի կառավարմամբ գրառման տպման արագությունը 5մմ/վ, 10մմ/վ, 12.5մմ/վ, 25մմ/վ, 50մմ/վ Զգայունություն՝ ոչ պակաս քան 2.5մմ/մվ, 5մմ/մվ, 10մմ/մվ, 20մմ/մվ, Պատասխանի հաճախականությանը՝ 0.05-ից 150 Հց, շեղումը ոչ ավելի, քան 10%, Գրանցման ձևը՝ ջերմային տպիչ, Ջերմային տպիչի թուղթ՝ ոչ պակաս քան 100մմ(W), Սարքի հավաքակազմը՝ էլեկտրոդների մալուղ՝ ոչ պակաս քան 1 հատ, Կրծքավանդակի էլեկտրոդներ՝ ոչ պակաս քան 6 հատ, Վերջույթային էլեկտրոդներ՝ ոչ պակաս քան 4 հատ, ԷՍԳ գել՝ ոչ պակաս քան 1 հատ, Ջերմային տպիչի թուղթ՝ ոչ պակաս քան 2 հատ, Սպիրոմետրը կարող է օգտագործվել FVC և SVC- ի տեստերի համար: FVC՝ ոչ պակաս քան ներկայացված - FVC, FEV1, PEF, (FEV1/FVC), FEF25, FEF50, FEF75, FEF2575, FEV6, FEV1/FEV6, ELA, FET, SVC՝ ոչ պակաս քան ներկայացված - IC, ERV, IRV, IVC, TV, MVV՝ ոչ պակաս քան ներկայացված - MVV Ծավալի նվազագույն միջակայքը 0.1 - 8 լ, Հոսքի արագության տիրույթը՝ ոչ պակաս քան 0,2 - 14 լ/վ, pO2 չափման տիրույթ / ճշտությունը՝ 0-100%, Հիշողությունը՝ ոչ պակաս քան 1500 թեսթ, Մարտկոցի շահագործման ժամանակը՝ ոչ պակաս քան 60 րոպե, Մեկանգամյա օգտագործման մուշտուկներ՝ ոչ պակաս քան 3000 հատ, Մատակարարը պարտավոր է տրամադրել սարքի օգտագործման ձեռնարկ՝ ռուսերեն կամ անգլերեն լեզուներով, Մատակարարը պարտավոր է կատարել տեղադրում և ուսուցում, Մատակարարը պարտավոր է տրամադրել՝ ոչ պակաս քան 1 տարվա երաշխիք, Մատակարարը պարտավոր է մատակարարել ք. Աբովյան, Հոսանքի սնուցման աղբյուր՝ 220Վ, 50Հց: Որակի սերտիֆիկատներ՝ CE կամ FDA Որակի սերտիֆիկատներ՝ ISO13485 կամ ГОСТ Р ИСО 13485 կամ համարժեք: Ապրանքը պետք է լինի չօգտագործված»:

Ընկերությունը Աճուրդին մասնակցելու նպատակով ներկայացված հայտի N 1 հավելվածի՝ դիմում-հայտարարության 4-րդ կետով հայտարարել և հավաստել է, որ «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2018/41» ծածկագրով էլեկտրոնային աճուրդին մասնակցելու նպատակով նույն դիմում-հայտարարությունում նշված չափաբաժնի (չափաբաժինների) մասով առաջարկվող ապրանքի (ապրանքների) տեխնիկական բնութագրերը համապատասխանում են նույն հրավերի համապատասխան չափաբաժնում

(չափաբաժիններում) նշված ապրանքի (ապրանքների) տեխնիկական բնութագրերի պահանջներին, և պարտավորվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2018/41» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հրավերով սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնել իր կողմից առաջարկվող ապրանքի (ապրանքների) անվանումը, ծագման երկիրը և տեխնիկական բնութագրերը (ապրանքի ամբողջական նկարագիր):

Հանձնաժողովի 29.10.2018թ. նիստի թիվ 6 արձանագրության 6-րդ կետի համաձայն՝ «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2018/41» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի 1-ին, 14-րդ և 27-րդ չափաբաժինների մասով Ընկերությանը ճանաչվել է առաջին տեղ զբաղեցնող մասնակից:

Նույն արձանագրության 7-րդ կետով Հանձնաժողովը որոշել է ծանուցել «ՄԵԴՊՐՈ» ՍՊԸ-ին՝ առաջարկելով ծանուցումը ուղարկելու օրվանից հաշված երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերը և բնութագրերը՝ Աճուրդի 1-ին, 14-րդ և 27-րդ չափաբաժինների մասով:

Հանձնաժողովի 28.11.2018թ. նիստի թիվ 10 արձանագրության 3.1 կետի համաձայն՝ Ընկերության կողմից ներկայացված տեխնիկական բնութագրերում կան անհամապատասխանություններ հրավերով սահմանված տեխնիկական բնութագրերի պահանջներին:

Հանձնաժողովն արձանագրել է հետևյալ անհամապատասխանությունները.

Հրավերով սահմանված տեխնիկական բնութագրի պահանջները	«ՄԵԴՊՐՈ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված տեխնիկական բնութագիր
Արտածումների գրառումը ձեռքի կառավարմամբ և ավտոմատ	Auto, Rhythm, Disclosure, Arrythmia detect
Ավտոմատ գրառման տպման արագությունը ոչ պակաս քան 25մմ/վ, 50մմ/վ:	տպման արագությունը 5մմ/վ, 12,5մմ/վ, 25մմ/վ, 50մմ/վ, 100մմ/վ:
FVC ոչ պակաս քան ներկայացված – FVC, FEV1, PEF, (FEV1/FVC), FEF25, FEF50, FEF75, FEF2575, FEV6, FEV1/FEV6, ELA, FET	FVC, FEV1, PEF, (FEV1/FVC), FEF25, FEF50, FEF75, FEF2575, FEV6, FET

SVC ոչ պակաս քան ներկայացված –IC, ERV, IRV, IVC, TV	ERV, IRV, TV

Ելնելով վերոգրյալից, հանձնաժողովը որոշել է «ՄԵԴՊՐՈ» ՍՊԸ-ին առաջարկել շտկել արձանագրված անհամապատասխանությունները՝ մինչև 30.11.2019թ. ժամը 18:00-ն:

«ՄԵԴՊՐՈ» ՍՊԸ-ն 30.11.2019թ. Պատվիրատուին ուղղված գրությամբ Հնաձնաժողովի կողմից Ընկերության առաջարկած ապրանքի տեխնիկական բնութագրում արձանագրված անհամապատասխանությունների վերաբերյալ հայտնել է հետևյալ նկատառումները.

««ՄԵԴՊՐՈ» ՍՊԸ-ի կողմից առաջարկվող սարքավորումն ունի ավտոմատ և ձեռքի կառավարմամբ տպելու հնարավորություն, ավտոմատ գրառման տպման արագությունը, պահանջող 12.5նն/վ և 25մմ/վ փոխարեն կարելի է ընտրել 12.5մմ/վ, 25մմ/վ, 50մմ/վ:

Սպիրոմետրի FCV-ի շարքից «ՄԵԴՊՐՈ» ՍՊԸ-ի կողմից առաջարկվող մոդելում բացակայում են միայն ELA և FEV1/FEV6 պարամետրերը, որոնք չափվող պարամետրներ չեն, այլ հաշվարկվող, և հաշվարկվում են պարզ բանաձևի միջոցով արդեն իսկ առկա FEV1, FEV6 և FVC պարամետրերի օգնությամբ բժշկի կողմից:

SVC շարքից «ՄԵԴՊՐՈ» ՍՊԸ-ի կողմից առաջարկվող մոդելում բացակայում է IC և IVC պարամետրները, որոնք նույնպես ոչ թե չափվող, այլ՝ հաշվարկվող պարամետրներ են, որոնք հաշվարկվում են պարզ բանաձևի միջոցով, օրինակ IC=TV /չափվում է առաջարկվող սարքի օգնությամբ /+IRV/չափվում է առաջարկվող սարքի օգնությամբ/:IVC նույնպես հաշվարկվում է պարզ բանաձևի միջոցով և կլինիկական նշանակություն չունի»:

27.12.2019թ. կայացած նիստի թիվ 11 արձանագրության 1-ին կետով Հանձնաժողովն արձանագրել է հետևյալը. «Քանի որ «ՄԵԴՊՐՈ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված տեխնիկական բնութագրերը չէին համապատասխանում սույն ընթացակարգի հրավերով սահմանված տեխնիկական բնութագրին, մասնակցին առաջարկվել է ներկայացնել շտկված տեխնիկական բնութագիրը: Սակայն «ՄԵԴՊՐՈ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գրությունը բավարար հիմք չէ վերջինիս կողմից ներկայացված տեխնիկական բնութագիրը հրավերի պահանջներին բավարար գնահատելու համար, ուստի հիմք ընդունելով ՀՀ

կառավարության 2017թ. մայիսի 18-ի թիվ 534-Ն որոշմամբ հաստատված կարգի 23-րդ կետը՝ որոշվեց «ՄԵԴՊՐՈ» ՍՊԸ-ի կողմից 1-ին չափաբաժնի համար ներկայացված հայտը գնահատել անբավարար»:

Ընթացակարգի քննության նպատակով Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստի ժամանակ Ընկերության տնօրենն՝ անդրադառնալով Հանձնաժողովի կողմից արձանագրված գնահատման արդյունքներին, ընդունեց, որ Ընկերության կողմից առաջարկված ապրանքի տեխնիկական բնութագրում առկա են որոշ անհամապատասխանություններ Հրավերի պահանջների նկատմամբ, սակայն պնդեց, որ արձանագրված անհամապատասխանությունները ոչ էական են, բացակայող պարամետրերը հաշվարկվող են, այլ ոչ թե չափվող, առաջարկվող սարքն ամբողջության բավարարում է Պատվիրատուի կարիքին, և ֆունկցիոնալ առումով չի զիջում Պատվիրատուի կողմից Հրավերով պահանջված սարքին, իսկ որոշ պարամետրերով նույնիսկ գերազանցում է վերջինիս:

Ընթացակարգի քննության շրջանակներում «ՄԵԴՊՐՈ» ՍՊԸ-ն Բողոքներ քննող անձին ներկայացրեց իր կողմից կատարված հարցմանն ի պատասխան ստացված՝ «Տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն Լ.Քոչարյանի 24.01.2019թ. թիվ 845 գրությամբ հայտնած կարծիքն առ այն, որ «ՄԵԴՊՐՈ» ՍՊԸ-ի կողմից առաջարկված Bionet Cardio 7-s ԷՍԳ/սպիրոմետր սարքի բավարարում է «Տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի պահանջներին:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ)

- 32-րդ կետի 20-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում.

- 46-րդ կետի համաձայն՝ հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրվում է ոչ ուշ, քան փաստաթղթերը հանձնաժողովի անդամներին տրամադրվելուն հաջորդող երրորդ աշխատանքային օրը: Ընդ որում, ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված տեխնիկական բնութագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին, իսկ անհամապատասխանություն արձանագրելու դեպքում հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

ՀՀ կառավարության 18.05.2017թ. N 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի՝

- 11-րդ կետի 3-րդ ենթակետի «ա» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ առաջին տեղն զբաղեցրած ճանաչված մասնակիցը հրավերով սահմանված՝ որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի հետ միասին ներկայացնում է նաև իր կողմից հաստատված՝ ապրանքների գնման դեպքում՝ առաջարկվող ապրանքի անվանումը և տեխնիկական բնութագրերը:

- 19-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարը համակարգի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից հաշված երեք աշխատանքային օրվա ընթացքում համակարգի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերի, ինչպես նաև նույն կարգի 11-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված փաստաթղթերը:

- 21-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին: Նույն կարգի 20-րդ կետով սահմանված հիմքերի առկայության դեպքում սույն կետով նախատեսված տվյալները չեն ներկայացվում լիազորված մարմին:

- 23-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև նույն կարգի 11-րդ կետի 3-րդ ենթակետի «ա» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում քարտուղարը նույն օրը համակարգի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

- 24-րդ կետի համաձայն՝ արձանագրված անհամապատասխանությունն առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից սահմանված ժամկետում՝

1) շտկվելու դեպքում հայտը գնահատվում է բավարար, և առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից.

2) չշտկվելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

«ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2018/41» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հրավերի՝

- 7.10 կետի 3-րդ ենթակետի «ա» պարբերության համաձայն՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարը համակարգի միջոցով առաջին տեղը զբաղեցրած մասնակցին ուղարկում է ծանուցում, առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում համակարգի միջոցով ներկայացնել առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը.
- 7.12 կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում գրավոր եղանակով տրամադրում է գնումների բողոքարկման խորհրդին: Ընդ որում, եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես

իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

- 7.16 կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացված, ներառյալ կոմիտեի կողմից տրամադրված, որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերի և (կամ) ապրանքի ամբողջական նկարագրի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը համակարգի միջոցով ծանուցում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցին առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը: Ընդ որում ծանուցմանը պարտադիր կցվում է հանձնաժողովի նիստի արձանագրության պատճենը, որում պարտադիր և մանրամասն պետք է նկարագրված լինեն գնահատման արդյունքում արձանագրված անհամապատասխանությունները, ներառյալ ապրանքի ամբողջական նկարագրի վերաբերյալ:

- 7.17 կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար և առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից.

2) չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է և նույն նիստում հանձնաժողովը առաջին տեղը զբաղեցրած մասնակից է ճանաչում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին՝ կիրառելով նույն հրավերի 1-ին մասի 7.9-ից 7.16-րդ կետերով սահմանված ընթացակարգը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք)՝

- 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ նույն օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝ պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին

համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայություններկի ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

- 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը;
- 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը պաշտոնական ընթացակարգ է նախաձեռնում գնումների բողոքարկման խորհրդում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների բողոքարկման խորհուրդը որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ:
- 13-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը:
- 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:
- 34-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո հրավերով սահմանված ժամկետում՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

Այսպիսով, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ.

- «ՄԵԴՊՐՈ» ՍՊԸ-ն «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2018/41» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի 1-ին չափաբաժնի մասով ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից և ծանուցվել է՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում համակարգի միջոցով որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերը և առաջարկվող ապրանքի բնութագրերը ներկայացնելու վերաբերյալ:

- Հանձնաժողովի 28.11.2018թ. նիստի թիվ 10 արձանագրության 3.1 կետի համաձայն՝ Ընկերության կողմից ներկայացված տեխնիկական բնութագրերում առկա են անհամապատասխանություններ հրավերով սահմանված տեխնիկական բնութագրերի պահանջներին, որի արդյունքում Հանձնաժողովը որոշել է «ՄԵԴՊՐՈ» ՍՊԸ-ին առաջարկել շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

- «ՄԵԴՊՐՈ» ՍՊԸ-ն 30.11.2019թ. Հնաձնաժողովին ներկայացրել է գրություն-պարզաբանում՝ իր կողմից Աճուրդի շրջանակներում ներկայացված՝ առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրի վերաբերյալ, որը Հանձնաժողովի կողմից չի գնահատվել որպես հիմք՝ ներկայացված տեխնիկական բնութագիրը բավարար գնահատելու համար, ուստի Հանձնաժողովը որոշել է մերժել Ընկերության հայտը:

Այսպիսով, Բողոքներ քննող անձը գտնում է, որ «ՄԵԴՊՐՈ» ՍՊԸ-ի կողմից Աճուրդի շրջանակներում ներկայացված ապրանքի տեխնիկական բնութագրում առկա են անհամապատասխանություններ Հրավերով սահմանված պահանջներին:

Բողոքներ քննող անձը գտնում է նաև, որ Ընկերությունը՝ Աճուրդի հրավերի թիվ 1 դիմում-հայտարարությամբ հայտարարելով և հավաստելով, որ իր կողմից առաջարկվող ապրանքի (ապրանքների) տեխնիկական բնութագրերը համապատասխանում են նույն հրավերի համապատասխան չափաբաժնում (չափաբաժիններում) նշված ապրանքի (ապրանքների) տեխնիկական բնութագրերի պահանջներին, ներկայացրել է իրականությանը չհամապատասխանող տեղեկատվություն՝ խախտելով գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին Ընկերության հետագա մասնակցության դադարեցմանը:

Ինչ վերաբերում է Ընթացակարգի քննության շրջանակներում «ՄԵԴՊՐՈ» ՍՊԸ-ի կողմից Բողոքներ քննող անձին ներկայացրած՝ «Տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի 24.01.2019թ. թիվ 845 գրությամբ հայտնած կարծիքին, ըստ

որի «ՄԵԴՊՐՈ» ՍՊԸ-ի կողմից առաջարկված Bionet Cardio 7-s ԷՍԳ/սպիրոմետր սարքը բավարարում է «Տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի պահանջներին, ինչն էլ «ՄԵԴՊՐՈ» ՍՊԸ-ի կողմից հիմք է ընդունվել՝ առաջարկված Bionet Cardio 7-s ԷՍԳ սարքը Պատվիրատուի պահանջներին լիովին համապատասխանելու վերաբերյալ պնդման համար, ապա Բողոքներ քննող անձը գտնում է, որ նման պնդումն անհիմն է, քանի որ տվյալ դեպքում Պատվիրատուն Հրավերով սահմանել է իրեն վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ իր կարիքին համապատասխան ապրանքի բնութագիրը, իսկ «Տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի կարծիքը չի հանդիսանում տվյալ ոլորտի լիցենզավորված մարմնի կողմից տրամադրած՝ առաջարկված սարքի ֆունկցիոնալ համարժեքության վերաբերյալ մասնագիտական եզրակացություն:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Բողոքներ քննող անձը գտնում է, որ առկա է «ՄԵԴՊՐՈ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով սահմանված հիմքը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով, 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 15.01.2019թ. թիվ 26-3/370-19 գրությամբ «ՄԵԴՊՐՈ» ՍՊԸ-ին /ՀՎՀՀ 02626144/ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել:

2. «ՄԵԴՊՐՈ» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրվանից:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝

ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ